ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

08 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Անդրանիկ Տոնոյանը, Հայկ Մարիկյանը, Հմայակ Մարտիրոսյանը, Անուշ Իսպիրյանը, Լիլիա Հարությունյանը, Արծրուն Հակոբյանը, Սյուզաննա Նազարյանը, Արմեն Ջուլհակյանը,

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u> Արսեն Հարությունյան, Գևորգ Մանուկյան, Սամվել Անտոնյան, Լուսինե Հովհաննիսյան,Գագիկ Շիրմազանյան, Լևոն Քալանթարյան, Արսեն Ավագյան, Էլմիրա Ռևազյան, Գրիգոր Պապյան, Արման Սուքիասյան, Անուշ Կիրակոսյան, Մարիամ Մանուկյան, աշխատակիցներ, ՀՈԱԿ-ների տնօրեններ

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Գրիգորյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 62-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը Ստեփանավան համայնքի 2025թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 63-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման 9-րդ կետի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Ստեփանավան համայնքի հողային հաշվեկշիռը 01.07.2025թ. դրությամբ՝ (համաձայն հավելված ձև 22):

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 64-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՍՒ ՄԱՍԻՆ